# ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ Տ.Տ ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ

Անհուն գոհունակութեամբ լսեցինք զեկուցումը Ներսէս Արքեպիսկոպոսի Ձերդ Ամենապատուութեան աթոռակալութեան հանդիսութեանց մասին պատշաճ շուքով: Տիրախնամ Սրբոց Յակոբեանց Սուրբ Աթոռի բազմադարեան պատմութեան մէջ նոր էջ բացուեց: Մաղթենք ձեզ ի սրտէ որ Ձեր հոգեշէն ու կրթանուէր իրագործումներով լուսաւորէք այդ էջը ի մխիթարութիւն համայն մեր Սուրբ եկեղեցուն: Մեր աղօթքներով մնում ենք Ձեզ հետ եւ Ձեզ զօրավիգ: Շնորհաւորում ենք եւ ողջունում ընտրութիւնը Տէր Դաւիթ Եպիսկոպոսի իբրեւ Լուսարարապետ եւ Տէր Յակոբ Եպիսկոպոսի իբրեւ Ձեզ փոխանորդ: Վստահ ենք թէ իրենց ներշնչեալ ու կորովի գործունէութեամբ մեծ չափով պիտի նպաստեն Ձեր բոլոր Աստուածասէր ծրագրերի կենսագործման: Փրկչի իջման սուրբ սեղանից Ձեզ եւ համայն ձեր զինուորեալ միաբանութեան մեր հայրական սէրը, գնահատանքը, քաջալերանքը, եւ օրհնութեամբ:

Վազգէն Առաջին
Կաթողիկոս Ամենայն Հայոց

digitised by A.R.A.R.@